ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 266

19 սեպտեմբեր 2017թ.

ՎԱՉԻԿ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Վաչիկ Խաչիկի Խաչատրյանին վարձակալության իրավունքով պատկանող (գրանցման վկայական N 1499014, տրված 2005 թվականի օգոստոսի 8-ին) 0.0018 հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց, թիվ 15/2:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 267

19 սեպտեմբեր 2017թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 48 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 31-ի <<Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին>> թիվ 48 որոշման 1-ին կետում <<շինությունները>> բառից հետո լրացնել <<(հասարակական նպատակային նշանակություն ունեցող քարե և փայտե տնակները, հարթակը, ծածկը և սանհանգույցը)>> բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 268

19 սեպտեմբեր 2017թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով և 219[1] հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեղա Նահապետի Բաղդասարյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 269

20 սեպտեմբեր 2017թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Շալիկո Բեգոյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր քաղաքի Նոր թաղամաս 3-րդ փողոց թիվ 23 հասցեում գտնվող, Շալիկո Բեգոյանին սեփականության իրավունքով պատկանող(վկայական N0090602 տրված 1999 թվականի դեկտեմբերի 14-ին) հողամասում կառուցված 360,61քմ արտաքին մակերեսով բնակելի տունը:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը,որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը բնակելի տան օրինականացման համար վճար չի գանձվում:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 270

22 սեպտեմբեր 2017թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 105-Ն որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Անահիտ Մարգարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Ե.Չարենցի փողոց,տուն 50 հասցեի բնակիչ Անահիտ Ժորայի Մարգարյանին տրամադրել դրամական օգնություն 60000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ առաջացած սոցիալական խնդիրների լուծման նպատակով:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ